ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/26 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան «26» «սեպտեմբերի» 2019թ.

Ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի
կառավարչի տեղակալ՝ Ա.Պապիկյան

Անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի ներման, քաղաքացիության,
պարգևների և կոչումների շնորհման բաժնի պետ՝ Կ.Գրիգորյան

Վարչապետի աշխատակազմի ներման, քաղաքացիության,
պարգևների և կոչումների շնորհման գլխավոր խորհրդատուի
պաշտոնակատար՝ Ա.Խլոյան

Վարչապետի աշխատակազմի գործերի
կառավարչության նյութատեխնիկական
ապահովման բաժնի ավագ մասնագետ՝ Լ.Մաղդեսյան

Վարչապետի աշխատակազմի գործերի
կառավարչության վարչատնտեսական
բաժնի ավագ մասնագետ՝ Ն.Էվոյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Կ.Սերոբյան

1.«ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ամփոփման մասին

Քանի որ 2-րդ չափաբաժնի մասով արձանագրվել էր նախահաշվային գնի գերազանցում, հանձնաժողովի նիստը կասեցվել էր և նշված չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը հրավիրվել էր բանակցությունների՝ գնի նվազեցման շուրջ, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1, տնտեսական 18 սենյակ:

Բանկցությունները չեն կայացել՝ մասնակցի չներկայանալու պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/26» ծածկագրով մրցույթի նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

2.1 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

Հ/Բ	Մասնակիցների զբաղեցրած տեղը	Մասնակիցների անվանումը
1	1	Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ
2		Չկայացած

2.2 Ոչ ավտոմատ եղանակով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

2.3 Էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>**

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք. Երևան, Կառավարական թ. 1 շենք, 18 սենյակ հասցեում, սույն արձանագրության 2.2 և 2.3 կետերով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտին հաջորդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝	Ա.Պապիկյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Կ.Գրիգորյան	ԳՊ/ԳԱ	
	Ա.Խլոյան	ԳՊ/ԳԱ	
	Ն.Էվոյան	ԳՊ/ԲԱ	
	Լ.Մաղդեսյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Կ.Սերոբյան	ԳՊ/ՄՀմ	